
Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019, 333 էջ *:

Բանալի բառեր՝ Վ. Բարխուդարյան, հայ գաղթօջախներ, Սփյուռք, հայկական կազմակերպություններ, դպրոցներ, հայապահպանություն:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի բաժնի նախագեղնած «Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուն» բացվում է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Լևոն արքեպիսկոպոս Զեփյանի «Փունջ մը ծաղիկ շիրմիդ վրայ, սիրելի Վալդիա» հուզիչ ակնարկով: Անկեղծ ու անմիջական տողերում սրբազանը ներկայացնում է ակադ. Վ. Բարխուդարյանին՝ իր տասնյակ տարիների բարեկամին ու ընկերոջը՝ խոսելով նրա մարդկային, քաղաքացիական, գիտնականի դիմագծերի մասին:

«Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի ծննդավայր Աղբյուրի գյուղի պատմության» է նվիրված Արմեն Ասատրյանի (Պատմության ինստիտուտ) հոդվածը: Արխիվային հարուստ նյութի, ինչպես նաև ժամանակի պարբերական մամուլի ու լուսանկարների օգտագործմամբ, վեր է հանվել պատմական Գուգարաց աշխարհի հայաբնակ այս գյուղի պատմությունը մինչ XX դարասկիզբ՝ միաժամանակ անդրադառնալով գյուղի տնտեսական, հոգևոր ու կրթական կյանքին:

Պ. գ. դ. Գևորգ Ստեփանյանը (Պատմության ինստիտուտ), հիմնվելով հայ ու օտար աղբյուրների ու պատմագրության վկայությունների վրա, անդրադառնում է Կուր գետի ձախ ափի և գետի ստորին հոսանքից մինչ Կասպից ծովն ընկած տարածքներում՝ Բուն Աղվանքում ու Շիրվանում ապրող բնակչության, այդ թվում՝ հայերի հոգևոր, էթնո-մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքին, որն իր զարգացումը ստացավ հատկապես հայերի կողմից քրիստոնեության ընդունումից հետո՝ մեծ ազդեցություն թողնելով տարածաշրջանային քաղաքականության և մշակույթի վրա: XVIII դարավերջում Բրանի Աղա Մուհամեդ շահի արշավանքների արդյունքում արցախահայության մի մասը գաղթեց դեպի Շիրվան (շուրջ 12.000 ծովա)՝ Արցախի՝ Զրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա,

* Ներկայացվել է 15. VIII. 2020 թ., ընդունվել է տպագրության 06. X. 2020 թ.:

¹ Շամախիում և Շիրվանում XVI–XVIII դդ. հայ բնակչության առկայության ու հետագա ստվարացման մասին տե՛ս նաև Է. Թաջիրյանի «Կոռնեյ լը Բրիլինի Ուղեգրությունը որպես հայ

Դիզակ գավառներից գաղթականների մեծ մասը հաստատվեց հայաշատ Շաքի (Նուխի) ու Շամախի քաղաքներում և շրջակա գյուղերում՝ նպաստելով երկրամասի առևտրատնտեսական ու կրթամշակութային կյանքի զարգացմանը: Բաքվում վերաբնակեցված արցախահայերի ջանքերի ու ներդրումների շնորհիվ էր նաև՝ այս քաղաքը դարձավ կարևոր առևտրատնտեսական կենտրոն, որի արդյունքում, հատկապես XIX դ. 70–80-ական թթ., անընդհատ ավելանում էր հայության հոսքն այստեղ: Համառոտապատմական առաջին մարդահամարի (28. 01. 1897 թ.) տվյալներով Բաքվում բնակվում էր 45.402 հայ: Արցախահայերը լուրջ ներդրում ունեցան Բաքվի նավթարդյունաբերության զարգացման գործում:

Բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանի (*Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ*) հոդվածի թեման «Գաղութային գրականության թումանյանական ընկալումն» է: Հովհ. Թումանյանը դեռ XX դարասկզբին «Վերնատան» ասուլիսներում և Թիֆլիսի ժողովրդական համալսարանի իր դասախոսություններում անդրադարձել է գաղթօջախներում ապրող հայ գրողներին ու նրանց ստեղծագործություններին: Նա Ռ. Պատկանյանի, Ղ. Ալիշանի, Մ. Շահազիզի, Մ. Պեշկյաշյանի գրականությունը համարել է «գաղութների, պանդխտության ու հալածանքի գրականություն» (էջ 63): Բանաստեղծի կարծիքով՝ գաղթօջախներում ստեղծագործող հեղինակները գուրկ չեն հայրենասիրական ոգու դրսևորումներից, սակայն հայ մարդու իրական կյանքն անձանոթ է նրանց: Այդուհանդերձ, Հովհ. Թումանյանը վստահ է, որ «անկախ ամեն ինչից անհրաժեշտ էր գաղթօջախներում ստեղծված գրականությունը ընկալել միևնույն ազգային մշակույթի համատեքստում» (էջ 66):

Պ. գ. թ. Անի Ֆիշենկճյանը (*Պատմության ինստիտուտ*) իր հոդվածում անդրադառնում է Հալեպի հայ Կարմիր Խաչի ստեղծման հանգամանքներին և դրա շուրջ քսանամյա գործունեությանը (1919–1938 թթ.): Հիմնավորելով Հալեպում կազմակերպության ստեղծման անխուսափելի հանգամանքները (ցեղասպանությունից մահապարծ հայության աննկարագրելի ծանր վիճակը, տնտեսական, առողջական, կրթական ու այլ խնդիրները)՝ Բերիո Հայոց թեմի Ազգային Առաջնորդարանի արխիվային նյութերի, մամուլի և այլ աղբյուրների օգտագործմամբ հեղինակն անդրադառնում է այս օղակի գործունեությանը, նրա համագործակցությանը մարդասիրական ընկերությունների ու «Հայկական Կարմիր Խաչի» հետ:

Բոլոնիայի համալսարանի «Պատմության և մշակույթի ամբիոնի» վարիչ, հայագետ, պրոֆ. Աննա Շիրինյանը ժամանակագրական կարգով անդրադարձել է Հռոմի սրտում գտնվող երեք եկեղեցիներում առկա XVIII դ. երեք հայերեն-լատիներեն տապանագրերին: Դրանց վերծանությամբ և թարգմանությամբ հեղինակը փորձում է վերհանել երկու հոգևորական ու մեկ աշխարհական հայերի հուղարկավորության պատճառը լատին երեք

գաղթօջախների պատմութեան ուսումնասիրման աղբիւր» հոդվածը («Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան» ժողովածու, խմբ. Վ. Բ. Բարխուդարեանի և Զ. Եկաւեանի, Երևան, 1996, էջ 126–128):

տարբեր եկեղեցիներում, այլ ոչ թե Հռոմի հայոց սուրբ Մարիամ Եգիպտացի եկեղեցուն (այժմ՝ Temple de Fortuna Virilis) կից հանգստարանում²:

Բ. գ. թ. Սրժվի Բախչինյանը (Պատմության ինստիտուտ) փորձել է պարզել Օվկիանոսքում (Օվկիանիայում) հայերի ներկայության ժամանակաշրջանը և պատճառները: Այս տարածաշրջանում հիշվող առաջին հայը Կ. Պոլսեցի Երվանդ Հակոբյանն էր (XX դ. սկիզբ), որի հետաքրքրությունների առարկան մարգարտի որսն էր ու տեղաբնիկների երաժշտական ֆոլկլորը, քանի որ տիրապետում էր պապուա լեզվին: Ա. Բախչինյանը նաև նշում է, որ ֆրանսիական Պոլինեզիայում ևս փոքր թվով հայեր էին բնակվում: Ֆրանսահպատակ հայերից ոմանք զբաղեցրել են այդ նահանգի իշխանության բարձրագույն պաշտոնները: Բսկ Հավայան կղզիների փոքրաթիվ համայնքի գործունեության շնորհիվ իշխանությունները 2014 թ. ճանաչել են Արցախի Հանրապետությունը, ապա 2015-ին՝ Հայոց ցեղասպանությունը:

Ֆրանսիայի Պոլ Վալերի-Մոնպելիե համալսարանի պրոֆ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ժերար Դեդեյանը անդրադառնում է Կրետեի արշավանքի ընթացքում հայարաբական խնդիրներին, կղզու վերաբնակեցմանը հայերով ու հույներով: Հետաքրքիր համեմատություն է անցկացվում Կրետեի և Կիպրոսի միջև՝ հայերի կողմից X դարում այս կղզիներում վերաբնակեցման առումով: Խոսվում է նաև XI–XII դդ. Կրետեի կառավարման մարմիններում պաշտոնավարող հայերի մասին: XIII դարասկզբին, երբ Կրետեն անցավ Վենետիկի տիրապետության տակ, աշխուժացան Կիլիկյան Հայաստանի և Վենետիկի միջև հարաբերությունները: Անկասկած, Կիլիկյան Հայաստանի անկումից հետո բազմաթիվ հայեր ապաստանեցին ինչպես Կիպրոսում, Հռոդոսում, այնպես էլ՝ Կրետեում:

Սորբոնի համալսարանի պրոֆ., պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Քլոդ Մուրաֆյանի առաջին հոդվածը հայ-ֆրանսիական դարավոր առնչություններին վերաբերող պատմական ակնարկ է: Այն ներկայացված է չորս ժամանակաշրջանով, ուր կարճ ամփոփված են Ռուսաստանից և ԱՄՆ-ից հետո ամենամեծ հայկական համայնքն ունեցող Ֆրանսիայի դարավոր կապը Հայաստանի ու հայ ժողովրդի հետ:

Նրա երկրորդ հոդվածը Մոլդովայի հայ վոյեվոդների մասին է, ուր հեղինակը հատկապես անդրադառնում է Յոն Վոդային, ով, ըստ XVII դ. մոլդովացի ժամանակագիր Գրեգուար Ուրեկիի, հայկական ծագում ուներ: Նա վոյեվոդի պաշտոնը զբաղեցրել էր կարճ ժամանակով՝ 1572–1574 թթ., սակայն նրա իշխանության շրջանը հայտնի է եղել տեղական բոյարների, հոգևորականության և թուրք-թաթար զավթիչների նկատմամբ ծայրահեղ դաժանությամբ, որոնց ձեռքով էլ, մատնության արդյունքում, մահապատժի է ենթարկվել: Լինելով ժողովրդի պաշտպանն ու սիրելին՝ Յոն Վոդան հերոսացվել է: Նրա եղբայրները ևս ունեցել են կարճատև իշխանություն: Պատմագիրների վկայությամբ՝ Մոլդովայի մայրաքա-

² Եպ. Ալեքսանդր Ասլանյանի տապանագրի նախկին հրատարակությունը տե՛ս Գրիգորիս Վրդ. Գալեմբեարեան. Կենսագրություն. Սարգիս արք. Սարաֆեան, Վիեննա, 1908, էջ 381–382:

դաքի տեղափոխումը Սուչավայից Յասսի ծրագրված է եղել Յոն Վոդայի կողմից, սակայն իրականացվել է փոյեվոդ Ալեքսանդր IV-ի օրոք՝ 1564–1568 թթ.: Նպատակը մայրաքաղաքը լեհական սահմաններից հեռացնելն էր:

Էլիզաբեթ Թաջիբյանը (Պատմության ինստիտուտ) իր «Մարկիզ Գրեգորիո դ'Ադդոլո (1707–1789)» հոդվածում անդրադառնում է ջուդահայ վաճառականներից մեկի կյանքին ու գործունեությանը: Գրեգորիո դ'Ադդոլոն XVIII դ. կեսերին երկու պատկերասրահ է ունեցել Վենետիկում և Ֆլորենցիայում: Նա, բացի հում մետաքսի առևտրից, զբաղվել է ժամանակի հայտնի նկարիչների կտավների հավաքմամբ և վաճառքով: Նրա հավաքածուի հայտնի կտավներից շատերն այժմ գտնվում են աշխարհի ամենահայտնի պատկերասրահներում: Գրեգորիո դ'Ադդոլոն մեծ ջանքեր է ներդրել Վենետիկի Հանրապետության, Սաքսոնիայի և Լեհաստանի միջև միջպետական առևտրային հարաբերությունների ստեղծման ու արտոնյալ պայմաններով դրանց պարբերաբար վերահաստատման ուղղությամբ, որը նրան հաջողվել է (1750–1786 թթ.): Նա սերտ կապեր է ունեցել Վենետիկի Մխիթարյան միաբանության և, հատկապես, Մխիթար Սեբաստացու հետ. այս մասին են վկայում նրա հայերեն գրված նամակները միաբանության հիմնադրին:

Պ. գ. թ. Հովհաննես Ալեքսանյան (Պատմության ինստիտուտ) իր հոդվածում անդրադառնում է Լեհաստանի հայ համայնքին՝ որպես հայկական Սփյուռքի եզակի դրսևորումներից մեկին՝ իր հարուստ պատմությամբ ու կարևոր դերով Լեհաստանի և Բալթյան տարածաշրջանի կյանքում: Հայերն ապրում են Լեհաստանում ավելի քան 650 տարի, և հայ համայնքը 2017-ին մեծ ոգևորությամբ նշել է հոբելյանը: Այս առիթով Լեհաստանի Սեյմը և Սենատը համապատասխան բանաձևեր են ընդունել, որով շնորհավորել են հայերին՝ ձեռքբերումների ու «լեհական մշակույթում ունեցած ներդրման, երկրի պատմության մեջ ստեղծագործական ներկայության համար» (էջ 203): Բալթյան երկրներում հայկական ավանդական համայնքներ չեն եղել: Համեմատաբար մեծ թվով հայեր են այնտեղ հաստատվել խորհրդային տարիներին՝ հատկապես Սպիտակի երկրաշարժից հետո:

Պ. գ. թ. Սեդա Օհանյանը (Պատմության ինստիտուտ) «Պաղտատի քրիստոնեայ համայնքներու ազգային դպրոցները XIX դ. երկրորդ կեսին» հոդվածում, բազմալեզու հարուստ գրականության և արխիվային նյութի օգտագործմամբ, լուսաբանել է այս գաղթօջախում կրթական հաստատությունների պատմությունը: XIX դ. երկրորդ կեսին Բաղդադի բնիկ քրիստոնեական համայնքներն ունեին իրենց ազգային դպրոցները, որոնցից երկուսը պատկանում էին Հայ Առաքելական եկեղեցուն՝ հովանավորվելով և ֆինանսավորվելով հենց համայնքի կողմից՝ ժողովրդի հանգանակություններով: 1853 թ. Բաղդադում հիմնադրվում է առաջին իգական վարժարանը՝ Հայ Առաքելական եկեղեցուն պատկանող «Աղջկանց դպրոցը»: Իրաքը Օսմանյան լծից ազատագրելուց հետո Բաղդադի հայկական երկու դպրոցները միավորվել են մեկ Համակրթական հաստատության մեջ՝ հնարավորինս պահպանելով և ապահովելով հայկական ազգային ինքնությունը:

Պ. գ. թ. Վահե Սարգսյանի (*Պատմության ինստիտուտ*)՝ «Զավախահայության դիրքորոշումը 1991 թ. մարտի 17-ի ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեի նկատմամբ» հոդվածը մի փաստաթղթի պատմություն է, մի դրվագ հայության այդ մասնիկի պատմությունից: Հարկ էր լրջորեն կողմնորոշվել, երբ 1990-ականներին, ԽՍՀՄ ճգնաժամի պայմաններում, միութենական և ինքնավար հանրապետությունների գերագույն խորհուրդներին, ինքնավար մարզերի ու օկրուգների պատգամավորական խորհուրդներին ուղարկվեց միութենական նոր պայմանագրի նախագիծը, որով նախատեսվում էր ԽՍՀՄ-ը վերածել ինքնիշխան խորհրդային հանրապետությունների միության: Հեղինակը, ժամանակի մամուլի և գրականության հիման վրա հանգամանորեն անդրադառնալով պատմական ոչ պարզունակ ու բազմաշերտ իրադրությանը, քննելով օր առ օր զարգացող իրավիճակը Հայաստանում, Վրաստանում և, ինչու ոչ, ողջ տարածաշրջանում ու Խորհրդային Միությունում, հիմնավորում է զավախահայության համար 1991 թ. մարտի 17-ի հանրաքվեի անցկացման անհնարինությունը:

Պ. գ. թ. Վահրամ Դարախանյանը (*Պատմության ինստիտուտ*) «Հայ-հրեական առնչությունների հարցի շուրջ» պատմական ակնարկում անդրադարձել է այդ ժողովուրդների հարաբերությունների հազարամյա փոխշփումների դրվագներին, որոնք, երբեմն ունենում էին ռազմական և քաղաքական դրսևորումներ, բայց դրանք հիմնականում մշակութային, առևտրատնտեսական բնույթ ունեին: Նա հիմնվելով հայ պատմագրության վրա, անդրադառնում է նաև այն հարցին, թե հրեաների՝ Հայաստանում ներկայության հանգամանքը որքանով է նպաստել Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության, և քրիստոնեության տարածման գործում նրանց ունեցած հաջողության վրա: Հայ և հրեա ժողովուրդների կողմից պետականությունը կորցնելուց հետո ևս նրանց միջև առնչություններն ամենին չեն դադարել: Թե՛ Հայաստանում, թե՛ Երուսաղեմում դրանք բավական սերտ են եղել: XVII դ. թուրք-պարսկական պատերազմների ընթացքում Շահ Աբասի իրականացրած բռնագաղթի հետևանքով Հայաստանի տարածքում հրեաներ համարյա չեն մնացել:

Սիյուռքահայ հայագետ, պ. գ. թ. Վարդան Մատթեոսյանը (ԱՄՆ) անդրադարձել է Միացյալ Նահանգների ներգաղթի քաղաքականությանն ու Լատինական Ամերիկայի հայ համայնքների ձևավորմանը: Ամերիկյան պատմության մեջ հայտնի փաստ է, որ նատիվիստ (բնիկապաշտ) և ազգայնական խմբավորումների անողոր քարոզչությունը նպաստեց ԱՄՆ Կոնգրեսի կողմից 1882–1924 թթ. ընթացքում մի շարք ներգաղթի օրենքների ընդունմանը: Այս օրենսդրությունն իրագործեց այդ խմբերի հետապնդման հիմնական նպատակը, այսպես կոչված, անցանկալի օտարերկրյա ներգաղթի գրեթե լիակատար արգելքը Միացյալ Նահանգներ, որը, ըստ էության, ուժի մեջ էր մինչև 1965 թվականը: Մակայն ժամանակի ընթացքում այդ օրենքը որոշ փոփոխությունների ենթարկելու հարկ եղավ: Հեղինակը, ուսումնասիրելով տարբեր տասնամյակների ԱՄՆ-ի օրենքներն այլ երկրներից եկող գաղթականության վերաբերյալ, դրանք հանգամանորեն համեմատել է Լատինական Ամերիկայի երկրների համապատասխան օրենսդրության հետ և այդ

ետնապատկերի վրա հիմնվելով հայ ու օտար մասնագետների ժամանակի, ինչպես նաև նորագույն ուսումնասիրությունների, վիճակագրական տվյալների վրա՝ անդրադարձել է հայերի ներգաղթի հարցերին XIX դարավերջից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմին ու դրանից հետո ընկած ժամանակաշրջանին:

Պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը (Պատմության ինստիտուտ) «ԱՄՆ-ի հայերը XX–XXI դդ. հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների համատեքստում» ծավալուն հոդվածում քննում է ԱՄՆ-ի հայ համայնքի շուրջ մեկդարյա երկդիմի դիրքորոշումը հայ-ռուսական քաղաքական հարաբերությունների պատմական զարգացումների ընթացքում: Եթե նախկինում հայ-ռուսական դրական հարաբերություններն ուղիղ համեմատական էին Սփյուռք-Հայաստան դրական հարաբերություններին, ապա XX դարի համաշխարհային ասպարեզում, Ռուսաստանում ու Հայաստանում տեղի ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական սրընթաց գործընթացները քաղաքական խոչընդոտներ էին առաջ բերում Հայաստանի (հետևաբար, նաև Ռուսաստանի) և որոշ սփյուռքահայ (մասնավորապես՝ հայ-ամերիկյան) կազմակերպությունների հարաբերությունների միջև: Միջազգային քաղաքական ասպարեզում Ռուսաստանի կողմից արձանագրված հաջողությունները, հայ-ռուսական զարգացող առևտրատնտեսական, ռազմաքաղաքական համագործակցության խորացումը, Ք. Ավագյանի կարծիքով, կարող են բարենպաստ ազդեցություն ունենալ սփյուռքահայերի շրջանում և, մասնավորապես, ԱՄՆ-ի հայերի վրա: Հեղինակը եզրակացնում է, որ սփյուռքահայության մոտ Հայաստանի և նրա ռազմավարական դաշնակից Ռուսաստանի նկատմամբ վստահության վերականգնումն ու ամրապնդումը թույլ կտա վերանայել և վերագնահատել նրանց քաղաքական հայացքները:

«Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուն» ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի համեստ ներդրումն է հայաշխարհի ուսումնասիրման անսպառ գործում:

ԷԼԻՋԱԲԵԹ ԹԱՋԻՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ հայ գաղթօջախների պատմություն: Հեղինակ է 2 մենագրության և 14 հոդվածի: elisetajiryan@yahoo.com